Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 08-01-2025 թ. որոշմամբ
«ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐՆԻԿԻ 48
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00084
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-12-27
1.5 ՀՎՀՀ-ն		02565835
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94054440
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.fpwc.org
1.8 Էլեկտրոնային փոստը		info@fpwc.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ռուբեն Խաչատրյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Վայրի ծառատեսակների աճեցում և տնկում Կովկասյան Կենսաբազմզանության ապաստարանի դեգրադացված հողերում	46,767,169
	ՀՀ Վայոց Ձորի մարզում մարդ-արջ կոնֆլիկտի մեղմում	3,350,370

Digitally signed by
NAHAPETYAN
LUSINE
6807820089
Date: 2025.05.15
16:30:21 AMT

	Մեղմում կլիմայի փոփոխությամբ ահագնացող մարդ-վայրի բնություն կոնֆլիկտը Հայաստանում	77,719,697
	Արջերի փրկության ծրագիր	379,540,750
	Հայաստանում երիտասարդների զորեղացում և հրդեհների կանխարգելում	40,925,763
	Հայաստանում մշակութային համագործակցության ծրագրերի համար տրամադրվող դրամաշնորհ	1,215,000
	Արևորդի միջազգային բնապահպանական փառատոն	6,566,000
	Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում Հայաստանում	17,000,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Անտառվերականգնում և համայնքային կայուն զարգացում	35,397,276
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Վայրի ծառատեսակների աճեցում և տնկում Կովկասյան Կենսաբազմզանության ապաստարանի դեգրադացված հողերում	200,262,660	
ՀՀ Վայոց Ձորի մարզում մարդ-արջ կոնֆլիկտի մեղմում	3,350,370	
Մեղմում կլիմայի փոփոխությամբ ահագնացող մարդ-վայրի բնություն կոնֆլիկտը Հայաստանում	38,239,946	
Անտառվերականգնում և համայնքային կայուն զարգացում	34,975,053	
Արջերի փրկության ծրագիր	317,203,505	
Հայաստանում երիտասարդների զորեղացում և հրդեհների կանխարգելում	7,123,178	
Հայաստանում մշակութային համագործակցության ծրագրերի համար տրամադրվող դրամաշնորհ	1,215,000	
Արևորդի միջազգային բնապահպանական փառատոն	6,566,000	

Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում Հայաստանում	17,000,000
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	625,935,712
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	625,935,712

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____10____էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Վայրի Բնության և Մշակութային Արժեքների Պահպանման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Վայրի Բնության և Մշակութային Արժեքների Պահպանման» հիմնադրամի (Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Վայրի Բնության և Մշակութային Արժեքների Պահպանման» հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության `կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում՝ ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ,

Ռուզաննա Բաղալյան

Բաժնետեր-տնօրեն/

առաջադրանքի պատասխանատու

«ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ»
"ՅՓ ՅՇ ՊԻ ՅԴՎԱՅՍ"
"FSP ADVICE"
02835031

25 ապրիլի 2025թ.

ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,256,137	1,097,857
Կենսաբանական ակտիվներ		17,434	6,550
Ոչ նյութական ակտիվներ		184	-
Հետաձգված հարկային ակտիվներ		1,556	-
		1,275,311	1,104,407
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	268,966	208,491
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	162,962	168,630
Տրված փոխառություններ	7	12,261	23,103
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	31,379	213,985
		475,568	614,209
Ընդամենը ակտիվներ		**1,750,879**	**1,718,616**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կուտակված արդյունք		(28,004)	(23,277)
		(28,004)	(23,277)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	9	-	6,535
Ֆինանսական վարձակալություն		61,658	99,369
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	1,237,190	1,038,439
		1,298,848	1,144,343
Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր և փոխառություններ	9	20,075	13,124
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	132,600	48,704
Ֆինանսական վարձակալություն		21,524	34,438
Եկամուտներին վերաբերող շնորհներ	12	305,836	501,284
		480,035	597,550
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**1,750,879**	**1,718,616**

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. ապրիլի 25-ին:

Ռուբեն Խաչատրյան
Տնօրեն

Կարինե Ղարիբյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհից եկամուտներ	13	605,179	555,638
Այլ եկամուտներ	14	34,305	66,156
Իրականացված ծրագրեր	15	(281,684)	(409,041)
Վարչական ծախսեր	16	(361,819)	(190,587)
		(4,019)	22,166
Ֆինանսական ծախսեր		(5,092)	(8,608)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		4,384	(8,182)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(4,727)	5,376
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում		-	-
Տարվա շահույթ/(վնաս)		(4,727)	5,376
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(4,727)**	**5,376**

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	7,267	7,267
Տարվա արդյունք	(28,653)	(28,653)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	5,376	5,376
Ճշգրտում	5,376	5,376
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(23,277)	(23,277)
Տարվա արդյունք	(4,727)	(4,727)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(28,004)**	**(28,004)**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/(վնաս)	(4,727)	5,376
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	62,185	95,986
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս	-	3,640
Ֆինանսական ծախս	5,090	9,359
Ֆինանսական եկամուտ	-	(752)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(4,384)	8,185
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	62,550	121,794
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	5,668	(76,156)
Պաշարների փոփոխություն	-	(138,318)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	83,896	(35,099)
Ակտիվներին վերաբերող շնորհների փոփոխություն	198,751	(45,411)
Եկամուտներին վերաբերող շնորհների փոփոխություն	(195,448)	528,333
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	94,942	355,143

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումից ելքեր	(224,880)	(206,319)
Փոխառությունների տրամադրում	(22,670)	(5,067)
Ստացված տոկոսներից մուտքեր	7,654	752
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(239,896)	(210,634)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների ստացում/մարում, զուտ	(37,652)	(23,149)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(37,652)	(23,149)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(182,606)	121,360
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	853	(325)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ մնացորդներ տարվա սկզբում	213,985	92,950
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ մնացորդներ տարվա վերջում	**31,379**	**213,985**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 37-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 15.05.2025 16:22